

ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԸ ԵՎ ԼԵԶՎԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՀԱՐՑԸ

ԱՇՈՑ ԱՐԱՀԱՄՅԱՆ

XIX դ. մեծ հայագետ Ա. Այտընյանը բազմազան հետաքրքրությունների բավական լայն շրջանակ է ունեցել, որոնց մեջ հատկապես կարևոր տեղ է զբաղում լեզվաբանությունը: Բազմիցս հանդես գալով լեզվի հետ կապված ինչպես գործնական, այնպես էլ տեսական խնդիրների քննությամբ՝ Ա. Այտընյանը երկու դեպքում էլ մեծ ծառայություններ է մատուցել հայ լեզվաբանությանը: Նա, իհարկե, չի հակադրում լեզվի քննության այդ երկու հայեցակետերը, այլ սերտորեն կապում է դրանք՝ մեկ ընդհանուր նպատակի ծառայեցնելով: Սակայն այժմ, երբ Ա. Այտընյանին հուզող գործնական հարցերը վաղուց ի վեր լուծված են, մեզ համար անհամեմատ ավելի հետաքրքրական են տեսական հարցերին նրա տված մեկնաբանություններն ու լուծումները, քանի որ դրանք ունեն ոչ միայն պատմական արժեք և այսօր էլ կարող են շատ բանով ուսանելի լինել:

Ա. Այտընյանի լեզվաբանական տեսությունն ամբողջական արտահայտություն է ստացել նրա «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության ստվարածավալ ներածության մեջ («Նախաշավիղ. արդի հայերեն լեզվին ծագումն, էությունը, պատմությունն ու ներկա վիճակը»): Այդ տեսության մեջ բավական մեծ տեղ են զբաղեցնում լեզվի հասարակական տարբերակների գոյության և փոխհարաբերության հարցերը (իհարկե, առանց այդ ժամանակակից տերմինի օգտագործման):

Պաշտպանելով իր ժամանակներում արդեն տարածում գտած այն տեսակետը, որ ժողովրդի պատմական կյանքն իր ազդեցությունն է թողնում լեզվի վրա, Ա. Այտընյանն ավելացնում է. «Բայց ազգի մը մեջ խորհողն ու խոսողը մեկ անհատ մը չէ, և ոչ ամենքը միևնույն կարգի և վիճակի մարդիկ են. որով՝ ըստ իմացականության և զգացողության աստիճանացր՝ լեզվի ալ որոշ աստիճանավորություն մը կ'ըլլե. Ավագանվո կամ Ազատաց լեզու, Ուսումնական կամ Գիտնոց լեզու, Հասարակ կամ Ընտանեկան լեզու, Գոհ-հիկ կամ Գեղջկաց լեզու, և այլն»¹: Ինչպես տեսնում ենք, Ա. Այտընյանն ունի լեզվի հասարակական տարբերակման հստակ գիտակցություն. լեզուն կրող հանրությունը միատարր չէ, նրա անդամները տարբերվում են միմյանցից ըստ հասարակության մեջ զբաղված դիրքի («կարգի և վիճակի»), և այդ տարբերություններն էլ իրենց հերթին ազդում են լեզվական ձևերի

¹ Ա. Այտընյան. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, նախաշավիղ, էջ 34:

կազմության ու ընտրության վրա՝ նաեղեցնելով հաճախ բավական զգալի լեզվական տարբերությունները:

Այս կամ այն հատկանիշով իրարից տարբերվող խմբավորումների լեզուների տարբերության մասին միտքն արտահայտվել է շատ վաղուց²:

Հասարակության տարբեր խավերի լեզուների տարբերակմանը կարելի է հանդիպել մի շարք լեզվաբանական և ճարտասանական աշխատություններում: Այսպես, Արիստոտելը տարբերում է յուրաքանչյուրի դիրքին (ըստ տարիքի, սեռի, ազգության) և հոգեկան հատկությանը (կիրթ կամ անկիրթ մարդ) հատուկ լեզուներ³, Ցիցերոնը պահանջում է հաշվի առնել խոսողի տարիքը, պաշտոնը և դիրքը⁴, Հորացիոսը լեզվական տարբերությունների հիմքում դրվող այլևայլ հատկանիշների թվում նշում է տարիքը, սեռը, զբաղմունքը⁵, Դիոնիսիոս Հալիկաոնասցին պատշաճությունը որոշելիս նաև է համարում տարիքը, ծագումը, կրթության աստիճանը, մասնագիտությունը, ապրելակերպը⁶: Սեքստուս էմպիրիկոսը լեզվական տարբերություններ է տեսնում տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքի ու գյուղի բնակիչների միջև⁷: Թեոնը գտնում է, որ անհրաժեշտ է նկատի ունենալ խոսողի տարիքը, սեռը, հասարակական դիրքը, զբաղմունքը, բնավորությունը⁸:

Մեզ հետաքրքրող հարցը միջնադարում յուրօրինակ ու հետաքրքիր մեկնարանություն է ստանում Դանթեի կողմից՝ կապվելով բարելոնյան աշտարակաշինության հետ: Ըստ Դանթեի, բարելոնյան խառնակության ժամանակ ամեն մի մասնագիտության ներկայացուցիչների տրվել է մեկ լեզու⁹. սա, մի կողմից, համաշխարհային պատմությունն է՝ իջեցված լեզվական տար-

2 խոսելով անցյալի մտածողների հայտնած մտքերի՝ Ա. Այտրենյանի հայացքների վրա ազդեցության մասին, գրեթե միշտ նկատի ունենք ոչ այնքան հավաստի, որքան հնադարյան ազդեցությունը: Ինքը՝ Ա. Այտրենյանը, տարբեր աոթներով հիշատակում է որոշ անտիկ մտածողների (Կվինտիլիանոս, Պլավտոս) կամ իր ժամանակակից ուսումնասիրողների (Ֆ. Շլեգել, Է. Փանթո, է. Բիզզ), սակայն այս ցուցակն ակնհայտորեն հեռու է լրիվ լինելուց: Բազմաթիվ լեզուների հրաշալի իմացությունը նրան, անշուշտ, ննարավորություն է տվել քաջատեղյակ լինել լեզվաբանական մտքի ուժեղումներին՝ հին աշխարհից մինչև իր օրերը: Պետք է ենթադրել, որ հենց այդ քաջատեղյակությունն է մեծ շահով նպաստել այն իրողությանը, որ նա ետ չի մնում իր ժամանակի եվրոպական գիտությունից, իսկ երբեմն էլ առաջ է քաշում ավելի ուշ ստեղծված տեսությունների համահունչ դրույթներ: Ասվածը, իհարկե, չի բացառում տեսակետների զուգահեռությունն ու համանմանությունը՝ անկախ որևէ ազդեցությունից, այս դեպքում էլ հետաքրքրությունից զուրկ չեն այդ նման տեսակետների դուգադրումն ու համեմատությունը:

3 Аристотель, Риторика, III, 7 («Античные риторик», М., 1978, с. 138).

4 Марк Туллий Цицерон, Об ораторе, III, 211 («Три трактата об ораторском искусстве», М., 1972, с. 218).

5 Կվինտիլիանոս Որատեայ Փլավկոսի Արունտ քերթողական, Վենետիկ, 1847, 112—118, էջ 23:

6 Дионисий Галикарнаасский, Тисий, 9 («Античные теории языка и стили», М.—Л., 1936, с. 197).

7 Секст Эмпирик, Против грамматиков («Сочинения в двух томах», т. 2, М., 1976, с. 70, 100).

8 Թեոնեայ Յաղագս ճարտասանական կրթութեանց, Երևան, 1938, էջ 122, 124:

9 Данте Алигьери, О народном красноречии, I, VII, 6—7 («Малые произведения», М., 1969, с. 275).

բերականների գոյացման պատմության մակարդակին, մյուս կողմից՝ մեկ միասնական լեզվի հիմքի վրա առանձին մասնագիտական լեզուների առաջացման պատկերը՝ ուժեղացված և հասցված համաշխարհային պատմության պատկերին: Իր աշխատության մի այլ հատվածում Դանթեն տարբերում է նույն րազաքի հարուստների և աղքատների թաղամասերի լեզուները¹⁰:

Թե ինչ չափով է Ա. Այտընյանը ենթարկվել այս, ինչպես նաև տվյալ հարցը շոշափող այլ աղբյուրների աղղեցությանը, դժվար է ասել. այդ աղղեցությանն անպայման պիտի գումարվեն սեփական գիտարկումները, ուսումնասիրություններն ու խորհրդածությունները: Բայց պարզ է, որ Ա. Այտընյանը որոշակիորեն գիտակցում է, որ ոչ միասնական հասարակությունը չի կարող ամբողջապես միասնական լեզու ունենալ. «Հայաստան յուր արքունյացն ու պեճճ աղատորներուն դիմաց՝ միջին և ստորին կարգի մարդիկն ալ ունեն արևայլ դրից և կրթության աստիճանավ, որոնց կենցաղական հարաբերությունները թագավորական դիվանին հարաբերություններեն շատ տարբեր և բոլորովին ուրիշ աստիճանի պետք էին ըլլալ: Ո՞վ կրնա հաստատել՝ թե ճոխ նախարարաց սեգ ամրոցներուն մեջ նույն ոճն ու նույն լեզուն կը հնչեր ինչ որ հանգարտիկ խաղաղասեր ընտանյաց խոնարհ երդերուն տակ»¹¹:

Զբավարարվելով լեզվական տարբերակների գոյության փաստի արձանագրմամբ՝ Ա. Այտընյանը զբավոր հուշարձանների մանրազնին ուսումնասիրությամբ փորձում է ի հայտ բերել նաև այդ տարբերակների բնորոշ առանձնատեսություններն ու փոխհարաբերությունը: Տեսական դատողություններ անելիս լեզվի բազմազան տարբերակներ նշելով՝ նա հետագա շաղաղանքում անդրադառնում է զրանցից երկուսին, որոնք էլ հենց նրա հետաքրքրության առարկան են: Դրանցից մեկը բարձր խավերին սպասարկող զրական լեզուն է, մյուսը՝ դեռևս զրաբարի տիրապետության շրջանում գոյություն ունեցող ու նրանից բազմաթիվ հատկանիշներով տարբերվող ժողովրդական («ռամկական») լեզուն: Քանի որ սրանցից առաջինը, հարուստ զրականությամբ ավանդված լինելով, արդեն լավ ծանոթ է ընթերցողներին, Ա. Այտընյանն իր աշխատության մեջ շեշտը դնում է երկրորդի՝ «նախնայաց ռամկորենի», բացահայտման ու նկարագրության վրա:

Իր նախորդ և ժամանակակից շատ ուսումնասիրողների նման Ա. Այտընյանն էլ լեզվի կամ նրա այս կամ այն տարբերակի դնահատման չափանիշ է համարում միտքը ճիշտ և հասկանալի արտահայտելու ունակությունը, որի շնորհիվ միայն լեզուն կարող է կատարել իր հաղորդակցական դերը: «Ռամկորենի»՝ այս հայեցակետով գիտարկումը նրան բերում է լեզվի այդ տարբերակի ամենաբնորոշ և ամենաէական հատկանիշների՝ «պարզության և բացահայտության» ըմբռնմանը: «Ռամիկն որ ավելի գործո քան թե գրոց ու դպրոցաց վրա դրած է յուր շահը, համենայնի դուրություն կը փնտռե. յուր խոսվածքի հոլովելուն երկու բեռներն են՝ Պարզություն և Բացանայտություն: Եվ իրոք ո՞րն է ռամկին լեզուն, ո՞րն է ժողովրդյան մ'ընտանական

¹⁰ Նույն տեղում, I, IX, 4, էջ 277:

¹¹ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 48:

լեզուն. եթե ոչ՝ ...ինչ որ առձեռն պատրաստ օգնական է իրեն՝ դյուրությամբ յուր մտքին թարգմանն ըլլալու»¹²:

Պարզության և բացաճախության վերաբերյալ ուսմունքը Ա. Այստընյանի «Քննական բերականության» և ընդհանրապես նրա լեզվագիտական ժառանգության ամենահետաքրքիր մասերից է: Պարզության ըմբռնումը, ինչպես նշեցինք, նոր չէր. այն առկա է արդեն ոճի հատկությունների՝ անտիկ ճարտասանական երկերում շարադրվող ուսմունքներում¹³: Սակայն Ա. Այստընյանը ոչ թե պարզապես կրկնում է արդեն հայտնված տեսակետները, այլ զարգացնում, հարստացնում է դրանք՝ ցուցաբերելով նուրբ և բազմակողմանի մոտեցում: Խոսակիցների փոխըմբռնմանը նպաստող այս հիմնալին սկզբունքների միջոցով Ա. Այստընյանը մտքի այստաճախումը և հաղորդակցման իրականացումը դիտում ու գնահատում է թե՛ խոսողի, թե՛ խոսակցի տեսանկյունից¹⁴, մի բան, որ հեղինակին հնարավորություն է տալիս նեոու մնալ խոսքային հաղորդակցման միակողմանի մեկնաբանություններից: Բացի այդ, հիշյալ սկզբունքների սերտ փոխկապակցության ըմբռնումը և դրանց դրսևորումը լեզվի տարրեր կառուցվածքային օղակների հետ կապելը Ա. Այստընյանին հանգեցնում են լեզվի պատմական զարգացման ընթացքում նրա առանձին մասերի կրած փոփոխությունների փոխհատուցման և փոխհավասարակշռման խիստ ուշագրավ տեսակետին¹⁵:

«Մտքի թարգմանի» գործառությունը հաջողությամբ կատարելու համար ժողովրդի լեզուն պիտի ունենար մի շարք հատկություններ, որոնցից զուրկ էր գրական լեզուն: Տեսական հիմնավորումներից հայերենի բուն քննությանն անցնելով՝ Ա. Այստընյանը նպատակ է դնում բացահայտել այդ հատկությունները և գտնել դրանց արտահայտությունները, որ պիտի անպայման թափանցած լինեին մատենագրության մեջ: Այդ հարցում նրան մեծապես օգնում են ոչ միայն հայերենի, այլև այլ լեզուների ընձեռած փաստերը:

Ա. Այստընյանի ժամանակաշրջանում արդեն առկա էր եվրոպական նոր ազգային լեզուների ձևավորման հարուստ և ուսանելի փորձը, որը տվյալներ էր տալիս նաև ժողովրդական, «գոեհիկ» լեզուների առանձնահատկությունների վերաբերյալ: Պաշտպանելով այն դրույթը, որ բոլոր լեզուներն անցնում են զարգացման նույն փուլերը և հանդես բերում համանման հատկանիշներ՝ Ա. Այստընյանը կառուցում է հին ժողովրդական հայերենի մասամբ մտահայեցողական պատկերը՝ նպատակ ունենալով մատենագրության մեջ գտնել դրա արտահայտությունները. «... ճշդիվ բանասիրական աշխարհաբարի մը էական նկարագիրն է ասոր ալ նկարագիրը. այս ինքն պարզած լեզու ըստ քերականական մասին, միշտ դյուրագույն և նվազ կնճալով ձևերու նախամեծարությամբ՝ որ Պարզման սկիզբ տնվանած ենր, բայց և զարդարուն, մեղմ ու փափուկ, միանգամայն հատու և բացահայտ. որոնց վրա աղել-

¹² Նույն տեղում, էջ 37:

¹³ Հմմտ. «Ոճի արժանիքը պարզության մեջ է. դրա ապացուցն այն է, որ եթե խոսքը պարզ չէ, ապա այն չի հասնում իր նպատակին» (Аристотель, ելզ. աշխ., II, 2, էջ 129):

¹⁴ Ա. Այստընյան, ելզ. աշխ., էջ 37:

¹⁵ Նույն տեղում, էջ 38, 102—104:

ցրեննք նաև որ ինքնակաց անկախ լեզու մըն է և բուն աղգային. այս ինքն
օտարութենն (հունութենն) անխառն»¹⁶:

Լեզվի որակը որոշող նման յուրահատկությունները, բնականաբար, շեն
կարող դրսևորվել նրա միայն մի մակարդակում, այլ ընդգրկում են ամբողջ
լեզվական կառուցվածքը՝ այս կամ այն չափով արտահայտվելով նրա տար-
բեր օղակներում: «Ընտանեկան կամ ուսմական» հայերենի յուրահատկու-
թյուններն ընդհանրապես նշելուց հետո Լ. Այտրեյանը, հենվելով իր խո-
րազնին հետազոտությունների արդյունքների վրա, գրում է. «Ժսկ մասնական
հատկությունները գլխավորաբար կը տեսնվին՝ Բառական մասին, Ստուգա-
բանական կամ ճշդիվ քերականական ձևերուն, Համաձայնության օրինացը
և վերջապես Խոսքի ձևերու և դարձվածներու վրա: Եվ են՝ 1. բառեր և անոնց
նշանակությունը. 2. բառերու ձևը. 3. հորովներու և հոբանկիններու կազմու-
թյունը. 4. թվական և մասնական անվանք. 5. նախդիր և նախադրություն.
6. բայ և դերբայ. 7. համաձայնություն. 8. խնդրառություն. 9. կիրառություն
և 10. խոսքի ձևը կամ շարադրության ընթացքը»¹⁷:

Ինչպես կարելի է տեսնել, Լ. Այտրեյանը որպես յուրահատկությունների
առանձին խումբ չի դիտում և առանձին քննության չի ենթարկում լեզվի
հասարակական տարբերակների հնչյունական տարբերությունները (բառերի
հնչյունական կազմի որոշ համեմատություններ կատարվում են «Բառերու
ձևը» վերնագրված հատվածում¹⁸): Նման դիրքորոշումը կարող է բացատրվել
մի շարք պատճառներով:

Լ. Այտրեյանի ժամանակաշրջանում հնչյունաբանությունը, որպես լեզ-
վաբանության ինքնուրույն բաժին, նույնիսկ արևմտանվորպական, առավել
ևս հայ լեզվաբանության մեջ դեռևս նոր էր ձևավորվում: Թերևս սա է հիմնա-
կան պատճառը, որ Լ. Այտրեյանն ընդհանրապես մեծ հակում չի դրսևորում
հնչյունաբանության ուսումնասիրության նկատմամբ: Այսպես, նշված աշ-
խատության քերականության բաժնում նա միայն սկզբում մի քանի դիտո-
ղություն է անում հնչյունների մասին և ապա ամբողջ շարադրանքը նվիրում
ձևաբանությանն ու շարահյուսությանը՝ երրորդ մասի մի փոքր զվտում միայն
դարձյալ անդրադառնալով հնչյուններին, այն էլ հնչյունափոխության որոշ
դեպքերի և տառադարձության առիթով:

XIX դարի ընթացքում կատարվում են բառերի հնչյունական կազմերի
ուղագրումներ ու համեմատություններ, սակայն հնչյունաբանությունը, որ-
պես կանոն, առանձին ծավալուն քննության առարկա չի դառնում, այլ մեծ
չափով միախառնվում է քերականական ձևերի նկարագրությանը և համե-
մատությանը. այդպիսի համեմատություններն էլ սովորաբար վերաբերում
են ցեղակից լեզուներին կամ նույն լեզվի պատմության տարբեր փուլերին
(ինչին հանդիպում ենք նաև Լ. Այտրեյանի մոտ)¹⁹, բայց ոչ նույն լեզվի
գոյակցող (ոչ տարածական) տարբերակներին: Նման վիճակը միանգամայն
բնական է, մանավանդ երբ ուսումնասիրողը գործ ունի ոչ թե իր ժամանա-
կում խոսվող (հնչող), այլ շատ դարեր առաջ խոսված և միայն գրավոր հու-

¹⁶ Նույն տեղում, էջ 61:

¹⁷ Նույն տեղում, էջ 62. տե՛ս նաև էջ 63—118:

¹⁸ Նույն տեղում, էջ 72—75:

¹⁹ Նույն տեղում, Քերականություն, էջ 278—283:

շարժաններում ավանդված լեզվի հետ, այն էլ այն դեպքում, հոր քննվող տարբերակներն ավանդված են նույն աղբյուրներում և չեն կարող տարբեր գրություններ արտահայտել տարբեր արտասանությունները:

Ա. Այտրնյանը լեզվական տարբերակներն առանձնացնելիս մեծ չափով հաշվի է առնում զրանց ոճական առանձնահատկությունները, իսկ շատ դեպքերում հիմնվում է համարյա միայն վերջիններիս վրա՝ նշելով տարբերակների առաջացման հասարակական հիմքերը և տալով զրանց ոճաբանական բնութագիրը՝ նա փաստորեն բացահայտում է լեզվի հասարակական և ոճական տարբերակումների փոխադարձ սերտ կապը և միասնականությունը. տարբեր հասարակական խմբերի գործածած լեզվական տարբերակների միջև գոյություն ունեցող տարբերությունները հաճախ հենց ոճական տարբերություններն են: Սրանից ելնելով՝ կարծում ենք, որ ճիշտ կլինի լեզվի՝ Ա. Այտրնյանի առանձնացրած տարբերակները կոչել ոչ թե պարզապես հասարակական, այլ հասարակական-ոճական տարբերակներ: Հիշենք, որ այդ տարբերակների՝ վերը մեջբերված բնութագրման մեջ Ա. Այտրնյանն ասում է. «...նույն ոճն ու նույն լեզուն կը հնչեր». այստեղ մենք փաստորեն գործ ունենք լեզվական տարբերակի և ոճի²⁰, այլ կերպ ասած՝ լեզվի հասարակական և ոճական տարբերակումների համադրման հետ²¹: Այդ տարբերակների անվանումներն արդեն դասային վերաբերությունից բացի նաև գնահատում են արտահայտում, և այդ երկուսը զրվում են կողք-կողքի, հավասարեցվում իրար (սովորական կամ Գիտնոց լեզու, թոճհիկ կամ Գեղջկաց լեզու): Այս թվարկումից անմիջապես հետո Ա. Այտրնյանը շարունակում է. «... և ըստ այնմ կ'ընդդիմաբաժանին՝ ազնիվ կամ կոշտ, զարդարուն կամ պարզուկ և այլն լեզուներ. ինչպես ամեն տեղ և ամեն ատեն փորձը կը ցուցնեն»²²: Այստեղ արդեն հասարակական տարբերակների որոշման ոճաբանական հիմնավորվածությունը և զրանց ոճաբանական բնութագրումը միանգամայն ակնհայտ են:

Ընդունելով և ներկայացնելով լեզվի բաղմամբիվ զուգահեռ տարբերակների գոյությունը, Ա. Այտրնյանը չի կորցնում զրանց միասնականության զգացումը. «Սակայն և այնպես այն այլևայլ բաղմագունյան աստիճանավոր-

20 Տերմինների այս անորոշությունը կարելի է բացատրել հարցի անբավարար ուսումնասիրվածությամբ և տերմինաբանության անբավարար մշակվածությամբ. նույնիսկ ժամանակակից լեզվաբանության մեջ եկատվում է նման տերմինաբանական չփոթ, որն իրավացիորեն դատապարտում է է. Բ. Աղայանը (է. Բ. Աղայան, լեզվի գոյության տարբերակային ձևերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 2, էջ 77):

21 Արդեն մեր ժամանակներում նման տեսակետ առաջ է քաշվում ամերիկյան հանրալեզվաբանության մեջ. հմտ. «Միևնույն հանրալեզվաբանական փոփոխականն ոգուսգործվում է հասարակական և ոճական շերտավորումը նշելու (signal) համար» (W. Labov, The Study of Language in its Social Context, «Sociolinguistic Patterns», Univ. of Pennsylvania Press, Phil., 1972, p. 240): Ա. Դ. Շվեյցերն այս մասին գրում է. «Նա (Ու. Լաբովը—Ա. Ա.) առաջ է քաշում մի վարկած (ընդգծումը մերն է—Ա. Ա.), ըստ որի, ոճական և հասարակական փոփոխակումը միասնական գործընթացի մասն է» (A. Д. Швейцер, Вопросы социологии языка в современной американской лингвистике, Л., 1971, էջ 43): Ժամանակակից լեզվաբանի խմբի վարկած խմբավորող տեսակետը, ինչպես տեսաբ. բավական որոշակիորեն զրեւորված է Ա. Այտրնյանի աշխատության մեջ:

22 Ա. Այտրնյան, նշվ. ուշի., նախաշավիղ, էջ 34:

րություններն իրարու հետ հանապազօրյա շփման մեջ մնալով, որչափ որ զուտոց պեսպիսությունը շանհետանա, քնականապես իրարմե առնելու տալու և բազդողելու անպակաս առիթներովը դարձյալ բարոյապես կը նույնանան կամ վերջապես նույն կը մնան»²³։

Որքան էլ առանձին հասարակական տարբերակները սպասարկեն հասարակության առանձին մասերին, այնուամենայնիվ դրանց մեջ կա նաև մի ընդհանրություն, որը պայմանավորված է հենց այդ հասարակության ընդհանրությամբ։ Այդ բոլոր հասարակական խմբերի ներկայացուցիչները նույն ժողովրդի ներկայացուցիչներն են, հետևաբար նրանց հոգեբանության, մտածողության, խառնվածքի, բնավորության որոշ ընդհանրություններն անտեսելն անթույլատրելի է։ Մի ժողովրդի լեզուն հնարավոր չէ և չի կարելի վերածել տարբերակների անվերջ բազմազանության՝ մոռացության տալով այդ տարբերակների ընդհանուր հիմքը։ Այս բանը քաջ գիտակցում է Ա. Այտրեյանը։ Նրա համար սլարդ է, որ լեզուն առանձին բառօգտագործումներով և հոլովման ու խոնարհման վերջավորություններով չի սահմանափակվում, և թեև անգամ նրա առանձին տարբերակներն իրենց բառապաշարով և օգտագործվող քերականական մասնիկներով ինչ-որ չափով տարբերվում են միմյանցից, ապա, միևնույնն է, նրանց մեջ կա «բառոյական» ընդհանրություն։ Նրանցում գրանցվում են նույն ազգային մտածողությունն ու ազգային քնավորությունը։ Լեզվի հասարակական տարբերակների խնդրին Ա. Այտրեյանի տված մեկնաբանման բարձր գնահատումը է. «Ազգայնը մեծագույն չափով պայմանավորում է հենց այն բանով, որ նա «շեշտում է, որ այդ բոլոր տարբերությունները չեն խախտում տվյալ ժողովրդի լեզվի միասնությունն ու ընդհանրությունը և չեն կարող խախտել, որովհետև լեզուն ծառայում է հասարակությանն ամբողջությամբ վերցրած»²⁴։

Քանի որ խոսքը նույն լեզվի տարբերակների մասին է, հետևաբար դրանք, կառուցվածքային, ոճական, գործառական-նպատակային տարամիտումներ, նաեղևս բերելով հանդերձ, իրենց շատ կողմերով էլ նույնանում, ընդհանրապես են, ուստի և կարող են ծայրահեղ ընդգծված տարբերություններ չունենալ։ «Ահա այս հատկություններն են որ՝ թեև դեռ նվազագույն աստիճանով և բանակությամբ՝ այն բարձր հնության մեջ ստորին լեզվի մը վրա կը նշմարվին, որուն... մենք հիմա ավելի զոյությունը կը ճանչնանք քան թե որպիսությունը, լեզվի մը՝ որ այն անորոշ և անկերպարան վիճակին մեջ տակավ խլրտելու կը սկսի, ժամանակին ձեռնտվությանն սպասելով՝ որ յուր սկզբունքները կարենա արժեքյուրել»²⁵։ Ըստ էության, սա նշանակում է, որ գրաբարի լեզվերում նախապես հանդես են գալիս աշխարհաբարի միայն առանձին տարրեր։ սակայն Ա. Այտրեյանը, որն աշխարհաբարի, որպես որակական ամբողջության, զոյությունը դնում է գրաբարի կողքին, նոր լեզվական որակի

²³ Նույն տեղում։

²⁴ Է. Բ. Այտրեյան, Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), Ի. Կրկան, 1958, էջ 275։

²⁵ Նույն տեղում, էջ 118—119։ Հետաքրքիր է Ա. Այտրեյանի այս տեսակետի հետ լամբասյան Ու. Լաբովի և Ու. Ա. Ռոյֆրամի կողմից առաջ քաշված և նորություն համարվող «սոցիալական շերտավորումների տարբերակումը» (W. Labov, The Reflection of Social Processes in Linguistic Structures, «Sociolinguistic Patterns», p. 113—114)։

առանձին տարրերի քանակական սահմանափակության և որակական անորոշության հստակ սահմանադատում չի կատարում:

Այլ լեզուների հետ զուգահեռներ անցկացնելու միջոցով ժաշխարհիկ լեզվի» գոյությունը տեսականորեն ապացուցելու հաջորդ քայլը լեզվի այդ տարրերակի ոչ բացահայտ, բողարկված, շղարշված փաստերի որոնումն է: Ծիշո է, մատենագրությունը չի սլարունակում այդ լեզվի բնութագրում կամ նկարագրություն, բայց եթե այդպիսի լեզու գոյություն ունեցել է, ապա նրա առանձին տարրեր չեն կարող թափանցած լիլենլ մատենագրության մեջ. «Այսու ամենայնիվ պետք ենք ըսել՝ որ այս նկատմամբ մեր հետաքրքրությունը շատացրենելու չափ նույն կ'ընծայեցրեն մեզի բուն հին (և դարու) մատենագրությունը, որուն հյուսվածքին վրա դյուրին է մեջ ընդ մեջ բացված ծեր-պերեն ներս հին գերդաստաններու կյանքը դիտել ... Այս մանր մանր հիշատակարանները, այս Դ և Ե գարուց ժողովրդյան գողտր բարբառույն ճշգրիտ պատկերն որ մեր ռակեղեն մատենագրությանց շատ տեղերը մեզի թողուցած են, պետք ենք նույն ժամանակներուն աշխարհիկ լեզվին մնացորդ նշխարքն անվանել»²⁶: Այդ տարրերը բացահայտելու համար լեզվաբանական քննությունն անշուշտ պիտի զուգակցվի մատենագրության ջանախնդիր բանասիրական վերլուծության հետ: Կրավոր հուշարձանների բանասիրական քննությունը հնարավորություն է տալիս նրանց լեզվում առանձնացնել ավելի կամ պակաս որոշակի ռճական շերտեր, որոնք կարող են դիտվել որպես լեզվի հասարակական տարբերակման արտացոլում: Նման աշխատանքի շնորհիվ Ա. Այտընյանը որոշակի կարգերի է բաժանում V դ. մատենագրական հուշարձանները և որոշում նրանց մեջ գրարարի մրցակցի՝ «ընտանեկան լեզվի» ներթափանցման աստիճանը²⁷:

Դեռևս անտիկ աշխարհում ճարտասանական-հոետորական աշխատություններում լեզվական-խոսքային տարբերակների որոշման մեջ այլ չափանիշների հետ միասին էական է համարվում նաև այն, թե ում է ուղղվում խոսքը²⁸: Ըստ այդմ տարբերակներից ամեն մեկը ձևեր է բերում իր գործա-

²⁶ Ա. Այտընյան, նշվ. աշխ., նախաշավիղ. էջ 49—50:

²⁷ Նույն տեղում, էջ 53—50 և շար.: Որպես համեմատության եզր վերցնելով եոր աշխարհարար, ինչպես նաև Ղազար Փարպեցու՝ ժամանակի ժողովրդական լեզվի նմուշներ համարվող երկերը, Ա. Այտընյանը մյուսներից առանձնացվող երեք կարգերի ընտրոշ ներկայացուցիչներ է համարում Փավստոս Բուղանդին, Հակոբ Մձրեացուն և Դավիթ Անհաղթին. ըստ Ա. Այտընյանի, սրանցից առաջինն իր ճոխ լեզվին հաճախ խառնում է ժողովրդական լեզվից վերցված բազմաթիվ ձևեր, երկրորդը, զրական և եռամկական լեզուների պարզությունը հետևելով, անընդհատ մեկից մյուսին է անցնում, իսկ երրորդը մեծ չափով կրում է լուսարենի ազդեցությունը և դրական լեզվի մեջ է մտցնում նրա համար արհեստական տարրեր՝ երբեմն օգտվելով ժողովրդական լեզվից: Ձևայած հիշյալ հեղինակները տարբեր չափով են տուրք տալիս «ռամկորենին», բայց, ինչպես նշում է Ա. Այտընյանը, ունեն նաև մի էական ընդհանրություն, և տվյալ դեպքում այդ է նրա համար էականը. «Երեք իրարու բեղդիմակաց կարգերն այ, որչափ որ ընավորությունը իրարմե ծայրն ծայր հեռու ըլլան,—մեկը հանդուգն սացմամբ, մեկալը խոնարհագույն անպաճուճ պարզությամբ, և վերջինն ամեն բան ճշգրտության զոհելով—կու գան մեկ կետի վրա կը միանան ըստ միտ հայեցման. այսինքն ժամանակի ռամկանին խոտորի և լիտրշի իրենց գրավորին վրա մատենագրական լեզվին անընտել եղածները պատկաստելու (նույն տեղում, էջ 56):

²⁸ Цицерон, նշվ. աշխ., III, 210, էջ 246, Дионисий Галикарнаесский, նշվ. աշխ., էջ 197, Секст Эмпирик, Против риторов, 58 («Сочинения в двух томах», т. 2, с. 133)

ծովյան ոլորտը, հանդես գալիս այն բնագավառում, որտեղ նա կարող է քավարարել ըմբռնումն ապահովելու պահանջը: Հայ իրականության մեջ, ինչպես համոզիչ կերպով առաջին անգամ ցույց է տվել Գ. Բ. Զահուկյանը, այս նկատառումներով է իր գրական գործունեության մեջ առաջնորդվել հ. Աբովյանը. այդ սկզբունքի իրականացման մեջ է հ. Աբովյանի ստեղծագործությունների լեզվի անմիջորինակության գաղտնիքի բանալին. ամեն անգամ իր որևէ ստեղծագործության լեզվի ընտրության հարցը լուծելիս հ. Աբովյանը հիմք է ընդունել այն, թե ում համար է այն նախատեսվում²⁹:

Ա. Այտընյանը որոշակիորեն արձանագրում է տարբերակների գործառական ոլորտների տարբերակման իրողությունը՝ դիտելով այն որպես լեզվի զարգացման ընթացքի մի բնական և անխուսափելի փուլ: Ինչպես հայոց լեզվի, այնպես էլ հին հունարենի և, մասնավոր, միջնադարյան Եվրոպայում ժողովրդական լեզուների հետ մրցակցող ու նրանց դեմ պայքարող լատիներենի պատմությունը բավական փաստեր է ընձեռում Ա. Այտընյանին՝ հին և նոր, գրական և խոսակցական լեզուների գործառական տարբերակումն ըմբռնելու և նրանց ընդգրկումները որոշելու համար. «...նույն ղառազանույթյունը գործնականապես ալ հաստատված կը գտնենք երկու լեզվաց մեջ: Առաջինը, գրաբարը, որ ավելի գործածականն է, գիտնոց և եկեղեցականաց ուղղված՝ նվիրյալ է ճառերու, շարականներու և ուրիշ քերթվածոց. երկրորդը, աշխարհաբարը, ժողովրդյան կը խոսի, և ասով կը գրվին՝ առականեր, տաղեր, մշակության և բժշկության գրքերը, և մասնավոր հրապարակական արձանագրությունները, անտարակույս նաև նամակներն ու նմանները»³⁰. Բայց նման վիճակն անկայուն հավասարակշռության վիճակ է և չի կարող երկար ժամանակ շարունակվել: Մրցակիցներից մեկը պիտի աստիճանաբար հեռանա ասպարեզից՝ տեղը զիջելով մյուսին: Ա. Այտընյանը չի կասկածում, որ հաղթանակողը ժողովրդի կենդանի լեզուն պիտի լինի:

Բազմիցս նշելով հասարակության կառուցվածքի և հասարակական կյանքի՝ լեզվի վրա ունեցած ազդեցությունը, Ա. Այտընյանը երբեք չի հանգում այն տեսակետին, թե դա անմիջական, ուղղակի, մեխանիկական կապ է: Հասարակական դիրքը, լեզուը և վիճակը լեզվական տարբերակներին անմիջաբար ծնունդ տվողը չեն, այլ նրանց գոյության նախապայմանը, սկզբնապատճառը, նրանք. ինչպես ճիշտ կերպով նկատում է Ա. Այտընյանը, ձևավորում են տվյալ դասին, խավին, հասարակական խմբին հատուկ մտածողություն և հոգեբանություն՝ «Բնացականության և զգացողության աստիճաններ»: Սրանք՝ հասարակական խմբերի մտածողությունն ու հոգեբանությունն են լեզվի հասարակական տարբերակման անմիջական ակունքը:

Ա. Այտընյանի՝ լեզվի հասարակական-ոճական տարբերակների քննության մեջ ամենաուշագրավը, նշանակալիցն ու արժեքավորը թերևս այն է, որ նա այդ տարբերակները դիտում է լեզվի զարգացման ընթացքի հետ փոխադարձ կապի մեջ³¹. Լեզվի հասարակական-ոճական տարբերակների գոյությունը նա

29 Գ. Բ. Զահուկյան, Հայ լեզվաբանական միտքը և աշխարհաբարի հարցերը 18—19-րդ դարերում, Երևան, 1954, էջ 39—42:

30 Ա. Այտընյան, Նշվ. աշխ., նախաշավիղ, էջ 147:

31 Տարբեր խմբակցությունների լեզվական տարբերությունների առաջացումը ժամանակի ընթացքում լեզվի փոփոխության հետ կապում է նաև Դանթեն (Данте Алигьери,

ուղղակի բխեցնում է լեզվի զարգացման օրինաչափություններից: Լեզվի զարգացումը, ըստ Ա. Այտրեյանի խորին համոզման, մտածողության զարգացման հետևանք է: Զարգացող միտքն իր պահանջներն է դնում լեզվի առջև, և լեզվի զարգացումը ենթարկվում է այդ պահանջներին: Սակայն քանի որ տարբեր հասարակական խմբերը որոշ չափով տարբերվում են իրենց մտածողությամբ, նրանցից յուրաքանչյուրն իր մտածողությանը և պահանջմունքներին համապատասխան ուղղվածություն է տալիս լեզվի զարգացմանը, և ժամանակի ընթացքում այդ խմբերի լեզուներն աճելի ու ավելի են հեռանում միմյանցից՝ վերածվելով ինքնուրույն տարբերակների³², Ինչպես բոլոր հարցերում, այնպես էլ այս դեպքում պատմականությունը դառնում է լեզվի նկատմամբ Ա. Այտրեյանի մոտեցման հիմքը: «Ներկան անցածով լուսավորելու է» բնաբանը, որ ամբողջ «Նախաշավիղ» ոգու արտահայտությունն է, բնորոշ է նաև Ա. Այտրեյանի կողմից լեզվի տարբերակների քննության համար: Ըստ նրա, լեզվի հասարակական-ոճական տարբերակները նույն լեզվի՝ քիչ թե շատ տարբեր ուղղություններով զարգացման արդյունք են և ոչ թե մեկընդմիջ տրված բաժանման կամ հասարակական կառուցվածքի՝ լեզվի վրա անմիջականորեն արտապատկերվելու հետևանք³³:

Լեզվի հասարակական-ոճական տարբերակումն էլ իր հերթին լեզվի զարգացման ընթացքի զրսևորումը, արտահայտությունն է համարվում, և լեզվի զարգացման պատկերը կառուցվում է նրա տարբերակների ու նրանց մրցակցության հիման վրա: Ի՞նչ մի կողմից՝ լեզվի զարգացումը բանալի էր լեզվի հասարակական-ոճական տարբերակների քննության համար, ապա մյուս կողմից՝ այդ տարբերակման հաշվառումն անհրաժեշտ է լեզվի զարգացման ընթացքը ճիշտ մեկնաբանելու համար, քանի որ այն հատուկ է լեզվի զարգացման բոլոր փուլերին. «...և՛ թե մարդկային ճարտարության մեջ անհատականության և աստիճանավորության բնական և հարկավոր երևույթը չենք ուզեր ուրանալ, հարկ է որ մեր մատենագրության բուն ընտիր ժամանակներուն ալ որոշենք լեզվին (զոնն ըստ մասին) վերն ու վարը»³⁴:

Հայերենի պատմության փաստերի քննությունը ցույց է տալիս, որ լեզվի հասարակական-ոճական գոյակցող տարբերակները մրցության, պայքարի մեջ են իրար հետ: Այդ պայքարն է, որ ժամանակի ընթացքում հանգեցնում է լեզվական որակի պատմական փոփոխության: Հենց այս է պատճառը, որ Ա. Այտրեյանը, որին, ինչպես նկատել ենք, հետաքրքրում է լեզվի հասարակական տարբերակումը ոչ թե ինքնին, այլ կապված լեզվի զարգացման ընթացքի հետ, իր նշած տարբերակներից ընտրում է ավագանու ու ռամիկների լեզուները և դրանց պայքարը: Ինչպես նշում է Ա. Այտրեյանը, «... արդեն ինք իրմե կ'իմացվի՝ որ նախնական և զրավոր լեզվի մը դիմաց՝ նոր ու հասարակ լեզվի նույն իսկ գոյությունն սպառնացող է»³⁵:

նշվ. աշխ., I, IX, 4—6, էջ 277), սակայն Դանթեի մեկնաբանության մեջ այդ կապը միակողմանի ուղղվածություն ունի, կամ, համենայն դեպս, Դանթեն նրա մի կողմի մասին է խոսում:

³² Ա. Այտրեյան, նշվ. աշխ., Նախաշավիղ, էջ 33—34:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում, էջ 111—112:

³⁵ Նույն տեղում, էջ 119:

Ինչպես տեսնում ենք, լեզվի զարգացման և հասարակական-ոճական տարբերակման փոխկապակցվածության հաշվառումը մեծապես նպաստում է այդ երկու երևույթներն էլ ճիշտ հասկանալուն ու մեկնարանելուն:

Հանրալեզվաբանության քննությանը ենթակա և նրա կողմից ինքնուրույնաբար վերջնականորեն լուծվող հիմնական (իսկ այդ գիտակարգի ձեռնհասության սահմանները սթափ դիտակցելու դեպքում՝ դրեթև միակ) հարցը լեզվի հասարակական տարբերակումն է: Այդ հարցի նկատմամբ հետաքրքրության բուռն աճի պայմաններում հետաքրքիր ու կարևոր է տեսնել, թե նախորդ շրջանի լեզվաբանության մեջ ինչ գնահատման են արժանացել հանրալեզվաբանության կողմից քննվող երևույթները: Ամեն մի տեսության, նույնիսկ ամենաավանդախախտի ակունքն ավանդույթն է. «նեբական անցածով լուսավորելու է», Գիտության նախորդ շրջանի նվաճումները հիմք են դառնում նրա հետագա զարգացման համար, և այդ հիմքի կարևորությունն անուրանալի է, եթե անգամ գիտության զարգացումը տանում է դեպի նրա արմատական վերանայումը: Ել ավելի մեծ չափով գա վերաբերում է այն տեսություններին ու հայացքներին, որոնց պարունակաց նշարտությունները ստուգվում են փորձով և ժամանակի ընթացքում չեն կորցնում իրենց արժեքը:

Հայ լեզվաբանության պատմության մեջ հանրալեզվաբանական խնդիրների առաջըաշման և լուսաբանման գործում առաջին խոշոր դեմքը Ա. Այտընյանն է, որի շատ դրույթներ ունեն ընդհանուր լեզվաբանական արժեք: Երևի է, Ա. Այտընյանի անմիջական նպատակը հայ զրական լեզվի ընտրության և աշխարհաբարի պատմության հարցերի լուծումն է, սակայն, ինչպես ամենայն իրավացիությամբ նկատում է Գ. Բ. Զահուկյանը, «... այս աշխատության մեջ Այտընյանը հանդես բերեց լեզվաբան-հետազոտողի փայլուն ունակությունների և իր տեսական եզրակացությունների մեջ մի շարք կողմերով առաջ անցավ ժամանակի արևմտաեվրոպական լեզվաբանության մակարդակից՝ հաղթահարելով նատուր-բիոլոգիական դպրոցի մի շարք թերությունները»³⁶:

Լեզվի հասարակական-ոճական տարբերակման ամբողջական տեսությունը չստեղծելով հանգեցրե՞մ Ա. Այտընյանը տալիս է որոշ հիմնադրույթներ, որոնք այսօր էլ չեն կարող շրջանցվել հանրալեզվաբանության կողմից, քանի որ արտացոլում են ուղադրավ և էական երևույթներ:

АРСЕН АЙТЫНЯН И ВОПРОС СОЦИАЛЬНОЙ ДИФФЕРЕНЦИАЦИИ ЯЗЫКА

АШОТ АБРААМЯН

Резюме

В трудах выдающегося армянского лингвиста XIX в. Арсена Айтыняна, особенно в «Критической грамматике новоармянского языка», впервые в истории армянской лингвистики затрагиваются вопросы социолингвистики. Опираясь на общую характеристику сущности человеческого языка, а также на данные различных языков, А. Айтынян прослеживает проявления социальной дифференциации в пределах общего

³⁶ Գ. Բ. Զահուկյան, *Լեզվ. աշխ.*, էջ 394:

национального языка. Выделяемые им варианты характеризуются с лексикологической, грамматической, стилистической точек зрения. Особенно важными являются положения А. Айтыняна о тесной взаимосвязи социальной дифференциации и процесса развития языка, об опосредованном характере связи социальной и языковой стратификаций, единстве национального языка в условиях дробления на различные варианты, единстве социально-стилистической дифференциации и т. п. Многие выводы и обобщения А. Айтыняна и ныне не потеряли своей ценности и могут быть учтены в социалингвистических исследованиях.